ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ-ԲՆ-ԴՇ-16/03

ք. Երևան «23» «հունվարի» 2016թ.

Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավարի ժ/պ **Խ.Աղաբեկյանի** (այսուհետ՝ պետական մարմին), որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և **«Սևան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը**, ի դեմս տնօրենի ժ/պ **Ա.Գնդոյանի** (այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 24-ի N 1555-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում), **«Սևան» ազգային պարկի պահպանության, պարկում գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների կատարման ծառայություններ»** ծրագրի՝ բաժին 05, խումբ 04, դաս 01, ծրագիր 03 (բնության հատուկ պահպանվող տարածքներում, ազգային պարկերում, պետական արգելոցներում պահպանության, գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական միջոցառումների իրականացում) (այսուհետ՝ ծրագիր), իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել որոշմամբ նախատեսված՝ մինչև **269 424 000 (երկու հարյուր վաթսունինը միլիոն չորս հարյուր քսանչորս հազար) ՀՀ դրամ գումար**, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի հավելված 1-ում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.1 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորիգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, պետական մարմինը հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում դրա մասին գրավոր ծանուցում է կազմակերպությանը:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. սույն պայմանագրով սահմանված կարգով պետական մարմին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ, իսկ ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն.

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.7. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

3. Մոնիթորինգը

3.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Կազմակերպությանը վճարումները կատարվում են միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունն ընդունվելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և (կամ) ժամկետներ:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կազմակերպությունը պարտավորվում է պետական մարմնին փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Պետական մարմինը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Սույն պայմանագրի պայմանները տարածվում են 2016 թվականի հունվարի 1-ից կողմերի միջև ծագած հարաբերությունների վրա և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և, որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ծրագիրը (հավելված 2) հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:
8.2. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:
8.3. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:
8.4. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պետական մարմին	**Կազմակերպություն**
ՀՀ բնապահպանության նախարարություն	**«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ**
ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք	ք.Սևան, Նաիրյան 178
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Արարատբանկ» ԲԲԸ
ՀՀ 900011007789	ՀՀ 1510012585250100
ՀՎՀՀ 02507198	ՀՎՀՀ 08602899
ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ղեկավարի ժ/պ	«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրենի ժ/պ
Խ.Աղաբեկյան	**Ա.Գնդոյան**
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված № 1
«25» «հունվարի» 2016թ. կնքված
№ ՀՀ-ԲՆ-ԴՇ-16/03 պայմանագրի

Պետական մարմին	Կազմակերպություն
ՀՀ բնապահպանության նախարարություն	**«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ**
ք. Երևան, Կառավարական 3-րդ շենք ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	ք.Սևան, Նաիրյան 178 «Արարատբանկ» ԲԲԸ
900011007789 ՀՎՀՀ 02507198 ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ղեկավարի ժ/պ	ՀՀ 1510012585250100 ՀՎՀՀ 00602899 «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրենի ժ/պ
Խ.Միրաբեկյան	**Ա.Գևորյան**
(ստորագրություն) Կ.Տ.	(ստորագրություն) Կ.Տ.

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

«Սևան» ազգային պարկի պահպանության, պարկում գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների կատարման ծառայություններ» ծրագրի իրականացման

NN ը/կ	Իրականացվելիք միջոցառման					
	անվանումը	**համառոտ բովանդակությունը**	**կատարման ենթակա գործառույթների նկարագիրը**	**ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները**	**վերջնա-ժամկետը**	**պահանջվող գումարը (դրամ)**
1	Պարկի տարածքի բնական էկոհամակարգերի լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության գենոֆոնդի, բնության ժառանգության, պահպանություն /պաշտպանություն ազգային պարկի ամբողջ տարածքում	Ազգային պարկի տարածքում և պահպանման գոտում՝ ա) պահպանության ընդհանուր միջոցառումների իրականացում, բ) հարող բնակավայրերի բնակչության շրջաններում էկոլոգիական իրազեկություն, էկոդաստիարակութուն, գ) պահաբաժիններում գարնանային և աշնանային հերթական և վերստուգիչ ստուգումներ (147343 հա)	Պահպանության ծառայություններ աշխատակիցների կողմից պետական արգելոցի և արգելավայրերի տարածքներում ստուգումների և շուրջօրյա հերթապահությունների միջոցով, բացատրական և քարոզչական միջոցառումների կազմակերպում և իրականացում, արդյունքների ամփոփում ու վերլուծություն	Պատշաճ պահպանություն, հանրության իրազեկության պատշաճ մակարդակի ապահովում	31.12.2016թ.	**243 824 000**

2	Հակահրդեհային միջոցառումներ	Համագործակցություն տեղական և ինքնակառավարման մարմինների հետ՝ ներգրավելով նրանց պարկի պահպանության և հակահրդեհային միջոցառումների իրականացման միջոցառումներին: Հակահրդեհային նշանակության ճանապարհների նորոգում և խնամք (14 կմ) և հանքայնացված շերտերի նորոգում և խնամք (140 կմ)	Հրդեհների կանխում	Համագործակցված պահպանության ապահովում և բարեկարգ ճանապարհներ	15.09.2016թ.	**900 000**
3	Գիտական ուսումնասիրություններ	ա. Անտառային արժեքավոր ծառատեսակների՝ սոճենի, թխկի, հացենի, բարդի և այլնի գիտափորձարարական տնկարանի հիմնում և դրանց վեգետացիայի պոտենցիալի ուսումանսիրություններ բ. Սևանի սիգ, կողակ, բեղլու ձնկատեսակների արհեստական վերարտադրության հնարավորությունների ուսումնասիրություններ	Ուսումնասիրությունների իրականացում	Արժեքավոր անտառային տեսակների աճեցման նոր մեթոդների հայտնաբերում և Սևանա լճի արժեքավոր ձկնատեսակների արհեստական վերարտադրության նախադրյալների ստեղծում	31.12.2016թ.	**15 700 000**
4	Անտառտնտեսական միջոցառումներ	Անտառտնկման միջոցառումներ ՝ «Սևան» ազգային պարկի տարածքում 7.0 հա տարածքի վրա	Անտառվերականգնում	Նոր անտառաշերտ	30.06.2016թ.	**9 000 000**
	ԸՆԴԱՄԵՆԸ					**269 424 000**

Հավելված № 2
«25» «հունվարի» 2016թ. կնքված
№ ՀՀ-ԲՆ-ԴՇ-16/03 պայմանագրի

Պետական մարմին	Կազմակերպություն
ՀՀ բնապահպանության նախարարություն	**«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ**
ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք ՊԾ աշխատակազմի գործառնական վարչություն ՀՎՀՀ 900011007789 ՀԿՀՀ 02507198 ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ղեկավարի ժ/պ **Ի.Աղաբեկյան** (ստորագրություն) Կ.Տ.	ք.Սևան, Նաիրյան 178 «Արարատբանկ» ԲԲԸ ՀՎՀՀ 1510012585250100 ՀԿՀՀ 06602899 «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրենի ժ/պ **Լ.Գևորյան** (ստորագրություն) Կ.Տ.

ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագիր

Ծրագրային դասիչը		Մատուցվող ծառայության անվանումը **«Սևան» ազգային պարկի պահպանության, պարկում գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների կատարման ծառայություններ**	Ոչ ֆինանսական ցուցանիշներ				Ֆինանսական ցուցանիշներ			
1155	ԱԾ 04	Նկարագրություն Բնության հատուկ պահպանվող տարածքներում, ազգային պարկերում, պետական արգելոցներում պահպանության, գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների իրականացում								
Չափորոշիչներ			Ի եռամսյակ	Ի կիսամյակ	9 ամիս	Տարի	Ի եռամսյակ	Ի կիսամյակ	9 ամիս	Տարի
Քանակական		Մարդու գործունեության հետևանքով ազգայինի պարկի բնական էկոհամակարգերի հավասարակշռությունը խախտող գործընթացների կանխարգելման ապահովում, պարկի տարածքը, հա	147343	147343	147343	147343				
		Սևանա լճի ձկնատեսակների վիճակի ուսումնասիրում և դրանց հիման վրա հաշվետվությունների կազմում, եռամսյակային հաշվետվությունների թիվը	1	2	3	4				

	Պարկի տարածքի բնական էկոհամակարգերի կենսաբազմազանության մոնիտորինգի անցկացում և յուրաքանչյուր եռամսյակի վերջում հաշվետվության ներկայացում, եռամսյակային հաշվետվությունների թիվը	1	2	3	4				
	Ազգային պարկի տարածքում էկոհամակարգերի լանդշաֆտային բազմազանության և կենսաբազմազանության մշտական դիտարկումներ, բնության ժառանգության գիտական ուսումնասիրություն, հաշվետվությունների թիվը			4	4				
	Թանգարանում և ուսումնական հաստատություններում դասերի կազմակերպում; սեմինար-դասերի քանակը, հատ	3	6	9	12				
	Հողատարածքների և գույքի նպատակային օգտագործման հետ կապված պայմանագրային պարտականությունների կատարման վրա բոլոր վարձակալների նկատմամբ հսկողության իրականացում; ստուգայցների քանակը, հատ	26	26	26	26				
	Հսկողության իրականացում ազգային պարկի տարածքի բնական էկոհամակարգերի, լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության պահպանության նկատմամբ; ամենօրյա ստուգայցների և շրջագայությունների քանակը, հատ	26	26	26	26				
	«Սևան» ազգային պարկի տարածքում գտնվող հանրային լողափերի սպասարկում և պահպանում, հանրային լողափերի քանակը, հատ		3	3	3				
Որակական	Մշակված չէ								
Ժամկետայնության	Թանգարանում և ուսումնական հաստատություններում դասերի կազմակերպման և սեմինար-դասերի անցկացման ժամանակահատվածը				Փետրվար-մայիս և սեպտեմբեր-դեկտեմբեր				
	Հողատարածքների և գույքի նպատակային օգտագործման հետ կապված պայմանագրային պարտականությունների կատարման վրա բոլոր վարձակալների նկատմամբ հսկողության իրականացման պարբերականություն				Ամսական 2-ից 4 անգամ				
Մատուցվող ծառայության վրա կատարվող ծախսը (հազար դրամ)		X	X	X	X	44993.8	112349.8	179705.8	269424.0

Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը
1155 Բնական պաշարների կառավարման և պահպանման, բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանման ծառայություններ

Վերջնական արդյունքի նկարագրությունը
Բույսերի և կենդանիների պահպանություն և վերարտադրության աճի ապահովում

Ծառայություն մատուցողի (մատուցողների) անվանումը
«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ